ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» փետրվարի 2013թ. N----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ գլխի կանոներով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Բելինսկու փողոցի հ.9 հասցեում գտնվող բնակելի տունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.12.2011թ. հ.2846238 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անիչկա, Քաջիկ, Հրաչյա Հայկյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անիչկա, Քաջիկ, Հրաչյա Հայկյանները դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Բելինսկու փողոցի հ.9 հասցեում գտնվող 34.1քմ մակերեսով շինությունը /բնակելի տուն/ մասնավորեցնելու խնդրանքով։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարաշ տարածքային ստորաբաժանման 23.11.2011թ. հ.10893ա գրության համաձայն՝ նշված հասցեում գտնվող անշարժ գույքը 30.05.1989թ. Օրջոնիկիձեի շրջանի տեխնիկական հաշվառման բյուրոյի կողմից սեփականության իրավունքով հաշվառվել է Ժիլբերտ Հայկյանի անվամբ և տրամադրվել է հ.520 տեխնիկական անձնագիրը, որի հատակագիծը բաժնում նշվել է, որ Օրջոնիկիձեի շրջխորհրդի գործկոմի 20.07.1962թ. հ.36 արձանագրության համաձայն՝ բնակելի տան 33.5քմ մակերեսով տարածքները հանձնվել է շրջխորհրդի տնօրինությանը, իսկ չափագրման /տեղազննման/ արդյունքում պարզել են, որ 33.5քմ մակերեսով տարածքները փաստացի զբաղեցնում և օգտագործում են Անիչկա, Քաջիկ, Հրաչյա Հայկյանները։

Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 26-ի հ.3927-Ա որոշմամբ վերականգնվել է Անիչկա, Քաջիկ, Հրաչյա Հայկյանների սեփականության իրավունքը Բելինսկու փողոցի հ.9 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 358.94քմ մակերեսով հողամասին կից 96.95 քմ հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ /առանց 33.5քմ շինության/։

Բելինսկու փողոցի հ.9 հասցեում գտնվող 34.1քմ մակերեսով շինության /բնակելի տուն/ նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում /չափագրման արդյունքում 33.5քմ-ը դարձել է 34.1քմ/։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման 21.02.2012թ. հ.129 գրության համաձայն, Երևան համայնքի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում ստացած 34.1 քմ մակերեսով շինությունը գտնվում է Անիչկա, Քաջիկ, Հրաչյա Հայկյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա։

Նկատի ունենալով, որ Անիչկա, Քաջիկ, Հրաչյա Հայկյանները փաստացի բնակվում են Բելինսկու փողոցի հ.9 հասցեում գտնվող բնակելի տանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 34.1քմ մակերեսով շինությունը գտնվում է սեփականության իրավունքով նրանց պատկանող հողամասի վրա, անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի վերոհիշյալ քաղաքացիների բնակարանային խնդիրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակելի տունն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակելի տունն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ